ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

01/15.2/1079-10
N
08.04.10թ.
Ձեր N ..... առ .....

ՀՀ Ազգային ժողովի <<Ժառանգություն>>
խմբակցության ղեկավար՝
պարոն Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաֆարյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2010 թվականի ապրիլի 6-ի N 02/10.1/3580-10 հանձնարարականի՝ ՀՀ կառավարությանն ուղղված Ձեր 2010 թվականի մարտի 17-ի N ԺԽ-Ե-0146/10 հարցապնդման կապակցությամբ՝ ստորև ներկայացնում եմ առաջադրված հարցադրումների վերաբերյալ հետևյալ պարզաբանումները՝

Հարց 1. Որքան բնակարաններ են հանձնվել շահագործման 2009 թվականի դեկտեմբերի 31-ի և այս պահի դրությամբ:

<<Գլենդել Հիլզ>> ՓԲ ընկերության կողմից պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում 2009 թվականին սկսվել են Գյումրի քաղաքում 1056 բնակարաններից բաղկացած 22 բազմաբնակարան շենքերի, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում 220 և 8 գյուղական բնակավայրերում 303 բնակելի տների շինարարական աշխատանքները:

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում ավարտվել և շահագործման են հանձնվել ՀՀ Լոռու մարզի 8 գյուղական բնակավայրերում թվով 146 բնակելի տներ:

2009թ. դեկտեմբեր ամսին ՀՀ Գյումրի քաղաքում հանձնման ենթակա թվով 1056 բնակարաններում այժմ իրականացվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009թ. դեկտեմբերի 22-ին տրված հանձնարարությամբ լրացուցիչ աշխատանքներ, որոնք

Մուտք N 5-853
09 04 2010թ.
Ս. ԺՈՂՈՎ

իրենց մեջ ներառում են՝ սանհանգույցների հատակների և պատերի կերամիկա սալիկապատման, սանիտարական սարքավորումների (լոգարանների, լվացարանների, զուգարանակոնքերի) տեղադրման, բնակարանների (բնակելի տների) ներտնտեսային գազիֆիկացման, ջեռուցման համակարգերի մոնտաժման, խոհանոցներում գազօջախների և լվացարանների տեղադրման աշխատանքները:

Հարց 2. Որքան բյուջետային միջոցներ են տրամադրվել <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ին վերոհիշյալ պետական ծրագրերի շրջանակներում 2009 թվականի դեկտեմբերի 31-ի և այս պահի դրությամբ:

ՀՀ Շիրակի և ՀՀ Լոռու մարզերում բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ <<Պետական գնումների գործակալություն>> ՊՈԱԿ-ի և <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ի միջև 2009թ կնքված պայմանագրերի շրջանակներում կատարվել է հետևյալ ֆինանսավորումը՝

<<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ին 2009 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին <<Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերում>> ծրագրով մինչև 2009թ. դեկտեմբերի 31-ը հատկացվել է 24,000,000.0 հազ.դրամ:

2010թ. պետական բյուջեի միջոցների հաշվին <<Բնակարանային շինարարություն>> ծրագրով Աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով ՌԴ վարկային միջոցների հաշվին անշարժ գույքի ձեռքբերման համար նախատեսվել է 22,050,000.0 հազ. դրամ գումար, որից այս պահի դրությամբ կատարվել է ֆինանսավորում 7,779,905.0 հազար դրամի չափով:

Հարց 3. Վերոհիշյալ պետական ծրագրերի շրջանակներում որքան է տրամադրվել արտաքին վարկային միջոցներից <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ին 2009 թվականի դեկտեմբերի 31-ի և այս պահի դրությամբ:

Ծրագրի շրջանակներում <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ին 2009թ. դեկտեմբերի 31-ի և այս պահի դրությամբ արտաքին վարկային միջոցներ չեն հատկացվել:

Հարց 4. Արդյոք կառավարությունը որոշում է կայացրել և ստեղծել հանձնաժողով բոլոր շահագրգիռ կողմերի (կառավարության լիազոր մարմին, քաղաքական կուսակցություններ, ՀԿ-ներ, հասարակական կազմակերպություններ և այլն) մասնակցությամբ՝ նմանօրինակ կարևոր և լայնածավալ ծրագրերի իրականացման վերահսկողության ու գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432, ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն և ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշումների դրույթների համաձայն, պետական աջակցությամբ կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները և բնակելի տների բաշխման և *հատկացման գործընթացն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը՝ իր կողմից ստեղծված հանձնաժողովի միջոցով, որի* կազմում ընդգրկված են շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները:

Հանձնաժողովի աշխատանքների թափանցիկությունն ապահովելու նպատակով խորհրդատվական ձայնի իրավունքով հանձնաժողովի աշխատանքներին մասնակից են դարձվել նաև հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Բնակարանների բաշխման գործընթացի թափանցիկությունն և հանրային իրազեկումն ապահովելու նպատակով բնակարանային ապահովման ծրագրերի շահառու հանդիսացող անձանց բնակարան (բնակելի տուն) հատկացնելու մասին որոշումները տեղադրվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության ինտերնետային կայքում:

Բացի այդ, ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի նիստերում քննարկման արդյունքներով ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու հավակնող անձանց ցուցակները պարբերաբար ներկայացվում են նաև ՀՀ վերահսկիչ պալատ:

Հարց 5. Արդյոք <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ն կառավարությանը կամ լիազոր մարմնին ներկայացրել է 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքների կատարողական և ֆինանսական հաշվետվությունները: Եթե այդպիսիք առկա են, ապա խնդրում ենք տրամադրել կրկնօրինակները կամ պատճենները:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում <<Գլենդել Հիլզ>> ՓԲ ընկերության հետ կնքվել են պետական գնման պայմանագրեր, որոնց համաձայն <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ն իր կողմից կառուցվող բնակելի տների (բնակարանների) հանձնումն իրականացնում է ոչ թե կատարողական ակտերի կամ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջոցով, այլ Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի կնքման միջոցով:

Հարց 6. Ինչով է պայմանավորված 2009 թվականի շինարարական ծավալներն ավարտելուց երկու ամիս առաջ <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ի և Հայաստանի Հանրապետության

կառավարության <<համատեղ>> որոշումը (ըստ 2009 թվականի նոյեմբերի 4-ի . <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ի կողմից տարածած հայտարարության), առ այն, որ բնակարանաշինության այս տարվա 2009թ. ծրագրերում ընդգրկվեն նաև երեքսենյականոց բնակարանների կառուցումը:Արդյոք կառավարությունը ուսումնասիրել է աղետի գոտում 1,2,3 և 4-սենյականոց բնակարանների պահանջարկը, և ինչու ի սկզբանե այն հաշվի չի առնվել՝ բնակարանաշինության ծրագրերը կազմելիս:

Հիմք ընդունելով երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում բնակարան ստացող շահառուների նախնական տվյալները՝ <<Պետական գնումների գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով հայտարարվել են համապատասխան մրցույթներ: Հետագայում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից շահառուների ցուցակների ճշգրտման հետևանքով անհրաժեշտություն առաջացավ 2009թ. բնակարանաշինության ծրագրում ընգրկել նաև 3-սենյականոց բնակարանների կառուցումը, որի արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ի հետ և վերջինս փոփոխեց ծրագրի շրջանակներում հաստատված բոլոր նախագծային փաստաթղթերը և դրանք համապատասխանեցրեց ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացված բնակարանաշինության ծրագրին:

Հարց 7. Մինչև օրս ինչպիսի և ինչ ծավալով խախտումներ ու թերացումներ են արձանագրվել սույն ծրագրի շրջանակներում: Ովքեր են ենթարկվել պատասխանատվության թերացումների համար:

Բնակարանաշինության ծրագրի իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի և Լոռու տարածքային բաժինների կողմից կատարված ուսումնասիրությունների և ընթացիկ ստուգումների միջոցով: Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2010 թվականի հունվարի 18-ի թիվ 06-Ա/3 հրամանի, 15-օրյա պարբերությամբ ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում է նախարարություն: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերությունների վերացման համար համապատասխան հաղորդումներ են ներկայացվել կապալառու <<Գլենդել Հիլզ>> ՓԲ ընկերությանը:

Կատարված ստուգումների արդյունքներով, հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնց արդյունքում կայացվել է 11 որոշում: Կայացված որոշումներով քաղաքաշինության բնագավառում թույլ տրված խախտումների համար կիրառվել է վարչական պատասխանատվության միջոցներ,

տուգանվել են ենթակապալառու <<Ի Էմ Էյջ Քոնսթրաքշընն>> ՓԲ ընկերությունը 550 հազար դրամի չափով, շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող <<Ջի Էն Էյ Քոնսթրաքշընն>> ՓԲ ընկերությունը՝ 550 հազար դրամի չափով և հեղինակային հսկողություն իրականացնող <<Դոմուս-Դիզայն>> ՍՊ ընկերությունը՝ 220 հազար դրամի չափով: Խախտումներն արձանագրվել են հիմնականում Գյումրի քաղաքի <<Մուշ-2>> բնակելի թաղամասի շենքերի ներքին հարդարման, արտաքին երեսապատման և ինժեներական կոմունիկացիաների մոնտաժման աշխատանքներում՝ խախտվել են նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և ճարտարապետաշինարարական նախագծերի պահանջները:

Հարց 8. Որքան բնակարաններ շահագործման կհանձնվեն 2010 թվականի գարնանը (ըստ ՀՀ քաղաքաշինության նախարար Վ.Վարդանյանի՝ ապրիլին):

2009 թվականին Գյումրի քաղաքում շինարարությունը սկսած 1056 բնակարաններից բաղկացած 22 բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2010 թվականի ամռանը:

Մինչև սույն թվականի օգոստոս ամիսը ծրագրված է փուլերով շահագործման հանձնել Սպիտակ քաղաքում՝ 220 բնակելի տներ (ներառյալ վերոնշյալ լրացուցիչ աշխատանքները), իսկ Լոռու մարզի գյուղական համայնքներում՝ 157 բնակելի տներ:

Հարգանքով՝

Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ